

նորանոր արժէքներ պիտի արտադրէր։ Բայց այն ինչ նա թողել է, ինչ նա կատարել է, ինչ նա ստեղծել է տարիների անդուլ աշխատանքով՝ քաւական է, որ նա անմահանայ։

Նրա անունն արդէն ժողովրդակա-նացել է եւ ապրում է ամենուրեք հայ ժողովրդի սրտում։

Եւ նա պիտի ապրի յաւիտեան, որովհետեւ, նա պատկանում է այն մեծութիւն-ներին, որոնց անունները մի մի յուշար-ձաններ են եւ որոնց յիշատակը դարերն ու հանգամանքները չեն կարող ոչնչացնել։

Նա այն մշակներիցն է, որոնք պատ-կանում են ոչ թէ միայն մի ազգի, այլ կանում են ոչ թէ միայն մի ազգի, այլ ամբողջ մարդկութեան. որովհետեւ նրանց ստեղծագործութիւնները ներշնչուած են հանրամարդկային զգացումներով ու քրդ-խում են մարդկութեան հոգուց։

Վիսագա, 17 Ապրիլ 1923։

ԱՐԱՄ ՆՐԱՄՅԱՆ



ԿՈՄԻՏԵՍ ՎԵՐԴԱՊԵՏ

(Հարգանքներով)

III.

Գործունէութիւն։

—

Ա. Դասախօսութիւններ - Համարներ։

Վերեւում մենք ասացինք որ Կոմի-տաս վարդապետը եղել է նաեւ համերգների կազմակերպիչ, կապէլմայստէր եւ դասա-խօս միաժամանակ։ Թէ հայաշատ վայրե-րում եւ թէ Եւրոպայի նշանաւոր կենդրոն-ներում նա տուել է դասախօսութիւնների եւ համերգների մի շարք, որոնք ամենուրեք վերջացել են մեծ յաջողութեամբ։

Ի՞նչ էր նպատակը այդ համերգների եւ դասախօսութիւնների։ Ժանօթացնել մեզ եւ օտարներին հայ ժողովրդական եւ հոգեւոր երաժշտութեան հետ եւ ցոյց տալ, երեւան հանել հայ սրտի եւ հոգու ինքնու-րոյն ստեղծագործութիւնները։

Այստեղ մենք ոչ մէկ խօսք չպիտի ա-սինք նրա կազմակերպած երկրորդական նշա-նակութիւն ունեցող համերգների եւ դա-սախօսութիւնների մասին. դա մեզ կը տա-նէր շատ հեռու։ Մենք բաւականանում ենք յիշատակել միայն առաջնակարգ արժէք ու-նեցող համերգներ եւ դասախօսութիւններ, բերելով կարծիքներ մի քանի ծանօթ քննա-դասներից։

Կոմիտաս վարդապետի իսկական արժէ-քը ցոյց տալու եւ նրա արուեստը ծանօթա-ցրենք մտադրութեամբ, մենք պիտի յի-շատակենք նոյնպէս օտար երաժշտագէտների կարծիքները։

Իր առաջին դասախօսութիւնը նա կար-դացել է Բերլինում։

1899 թուին, «Միջազգային երաժշ-տական ընկերութեան» սրահում — որի հիմ-նադիր անդամներից մէկն էլ ինքն է եղել — կարդացել է մի դասախօսութիւն։ Դասա-խօսութեան ներկայ են գտնուել պրոֆէսոր-ներ, երաժշտագէտներ, հայ եւ գերմանացի ու սանդղներ։

Այդ երեկոյ նա խօսել է հայ կրօ-նական եւ ժողովրդական երգերի մասին։

Միջազգային երաժշտական ընկերու-թեան նախագահ եւ Բերլինի համալսարանի երաժշտութեան պրոֆէսոր Փլայշէրը դասա-խօսութիւնից առաջ հետեւեալն է ասել. —

«Առաջին¹ անգամն է, որ Բերլինում այսպիսի մի դասախօսութիւն է կարդաց-ուում եւ գուցէ մինչեւ այժմ Պարիսի աշ-խարհահանդէսներում անգամ այդ տեսակ դասախօսութիւն չի կարդացուել»։

¹ Ա. Երիզար, «Հայկական երաժշտութիւնը Բեր-լինում», Նոր դար, 1899, երես 115։

«Հայր Կոմիտասը համառօտապէս նկարագրեց Հայոց եկեղեցու պատմութիւնը մինչեւ Բաղկեդոնի ժողովը, երբ հայկական եկեղեցին բաժանուեց յունական եւ կաթոլիկ եկեղեցուց եւ իբրեւ անկախ, ազգային եկեղեցի հաստատուն մնաց մինչեւ մեր օրերը: Հայր Կոմիտասը ցոյց տուեց Հայոց եկեղեցական եւ ժողովրդական եղանակների, նրանց կազմութեան տարբերութիւնը: Հայր Կոմիտաս պատրաստել էր մի խումբ չորս հոգուց բաղկացած, երկու Օրիորդներ եւ երկու Պարոններ (Գերմաններից) քառաձայն Հայոց եկեղեցական եւ ժողովրդական երգերը երգելու: Խումբը երգեց եկեղեցական երգերից՝ «Փանօք քեզ տէր», «Օրհնեցէք-գովեցէք», «Ով զարմանալի», «Տէր-ողորմեա», եւ ժողովրդական երգերից՝ «Սոնա եար», «Անձրեւն եկաւ», «Այ տղա», «Հով արէք»: Կոմիտաս վարդապետը երգեց քրդերէն՝ «Լէ լէ գաւրէ մընստ», նաեւ արաբերէն, պարսկերէն եւ տաճկերէն երգեր, ցոյց տալու համար նրանց եւ հայկական եղանակների միջեւ եղած տարբերութիւնը: Նա ցոյց տուեց թէ ինչպէս է կարգացուում Հայոց եկեղեցում Աւետարանը. դրա համար նա կարդաց՝ «Ի սկզբանէ էր ըսնն», ապա հին կտակարանի մարգարէների գրութիւնները, կամ սաղմոսները ինչպէս են կարգացուում: Երգեց զանազան շարականներ եւ հայ ժողովրդական երգեր եւ սրանց համեմատութիւնն արաւ: Berliner Morgenpost-ում, գերմանացի մի քննադատ հրձուանքով եւ գովեստով է խօսում դասախօսութեան եւ հայ ժողովրդական երգերի մասին, որոնց նա ուրախ եւ գերմանական սրտին ու զգացողութեան մօտ է գտնում»:

1901 թուին Բերլինում կայանում է ընդհանուր եկեղեցական երաժշտութեան համագումար: Հայոց կաթողիկոսի (Խրիմեան Մկրտիչ) կարգադրութեանը համաձայն, համաժողովին Կոմիտաս վարդապետը դասախօսում է հայ եկեղեցական երաժշտութեան վրայ՝ յառաջ բերելով խոր հիացմունք:

1905 թուին, Հայր Կոմիտասը Թիֆլիսում տալիս է երկու համերգներ՝ հոգեւոր եւ աշխարհիկ երգերից բաղկացած: Երկու համերգներն էլ հանդիպում են որոշ անյաջողութեան: Ինչն էր պատճառը այդ անյաջողութեան: Ահա թէ ինչ է գրում Մարգարիտ Բաբայեանը:

«Պարզ էր դրա պատճառը: Որովհետեւ ան խորապէս տարուած լինելով գերման մեծ վարպետների երգերով, ի հարկէ երազում էր նոյնանման հոյակապ ստեղծագործութիւնների մասին եւ մեր արուեստին համար: Իր առաջին խմբական (choral) երգերը՝ թէեւ ամէն քիչ թէ շատ հասկացող երաժշտի կարող են հիացում պատճառել իրենց կառուցուածքի (structure) կատարելութեամբ, զարմանալի ներդաշնակ combination-ներով, բազմաթիւ երկրորդական ձայների եղանակին սրամիտ variante-ներով, բայց իրենց ամբողջութեանը մէջ նրանք դալիս էին խեղում պարզ գեղջկական երգը կամ եկեղեցական եղանակը եւ այսպիսով լսողը չէր կարողանում իր տպաւորութիւնը ամբողջացնել: Այն ժամանակ լսողը կրում էր այդ գերմանական երաժշտութեան ազդեցութիւնը՝ որ այնքան հեռու է մեր քրնքոյշ, մեղամղձոտ, տարօրինակ, երազուն, եւ իտէպական երաժշտութիւնից»:

«Այդ իսկ պատճառով վարդապետին առաջին համերգները Թիֆլիս եւ Բագու՝ թէեւ շատ սպասուած եւ շատ աղմուկ հանած այն կատարեալ ժողովրդականութիւնը չէին կարող տալ մեր մեծ երաժշտին՝ ինչ որ նա վայելում է այժմ» հասնելով ինքնուրոյնութեան գագաթնակէտին¹:

Մարգարիտ Բաբայեանի կարծիքը Բաժանում է նաեւ մի ուրիշ քննադատ:

«Կոմիտաս վարդապետը մտցնում էր մեր մէջ երաժշտական մի այնպիսի բարդ արուեստ, ինչպիսին է վալներինը, մի ար-

¹ Մ. Բաբայեան, «Տպաւորութիւններ Կոմիտաս վարդապետի անձին ու գործին շուրջ», «Նաւասարդ» 1914, Պոլիս:

ուեստ, որը իր անդրանիկ քայլերում ընդ-
դիմութեան հանդիպեց շատ աւելի նուրբ
ու կրթութեամբ ճաշակով ժողովրդների կող-
մից: Առաջին անգամ երբ վազնէրին ներ-
կայացրին Պարիսում, նրա հանձարը ողջուն-
ուեց շուրջներով եւ անարգանքով: Նա
գտաւ նոյն վերաբերմունքը գրեթէ ամէն
տեղ, Աւստրիայում, Դալմաթիայում եւ մին-
չեւ անգամ իր հայրենի երկրում: Հետեւա-
բար շատ բնական էր, որ հայ հասարակու-
թիւնը չգնահատէր տաղանդաւոր վարդա-
պետի գործը, այնպէս՝ ինչպէս որ պէտք է:
Նա գալիս էր մեզ մօտ մի նոր արուեստով,
մի նոր դպրոցով, որը գիտակցօրէն դատելու
համար, անհրաժեշտ էր նրա հետ մօտից
ծանօթանալ ու փնտռել, գտնել ու ծշտել
նրա հիմքերն ու ղեկավարող օրէնքները¹:

Բացի համերգներից, նոյն թուին Կո-
միտաս վարդապետը կարդում է երկու դա-
սախօսութիւններ հայ երաժշտութեան մա-
սին: Ինչպէս Թիֆլիսում կարդացած դասա-
խօսութիւնների ժամանակ, այնպէս էլ ամէն
տեղ, ուր նա առիթ է ունեցել բեմ դա-
տել, տեսականին միացրել է նաեւ գործնա-
կանը, ինքը անձամբ երգելով: Թիֆլիսում
կարդացած դասախօսութիւնների ժամանակ
նա ցոյց է տուել հայ ժողովրդական երգի
տեսակները եւ նրանց նկարագիրը:

Բագուի «Հայ Կուլտուրական Միու-
թեան» հրաւերի համաձայն Կոմիտաս վար-
դապետ Բագուում կարդում է երկու հրա-
պարակային դասախօսութիւններ՝ հասարա-
կութեան վրայ թողնելով խորը տպաւորու-
թիւն:

Կոմիտաս վարդապետի սարքած հա-
մերգների գլուխ գործոցը կազմում է Փրան-
սիայի մայրաքաղաքում կայացած նուագա-
հանդէսը (1906 թ.), որը ժամանակին մեծ
աղմուկ հանեց: Այս համերգի մասին ար-
տայայտուել են Պարիսի երաժշտական բոլոր
նշանաւոր հանդէսներ, եւ հիացել՝ հայ ժո-

ղովրդական եւ եկեղեցական երգերի քաղ-
ցրութեան, ներդաշնակութեան եւ խորհր-
դաւորութեանը վրայ:

Անհրաժեշտ ենք գտնում երեւան
բերել այդ թերթերի կարծիքները: Բայց
նախ քան այդ խօսք տանք երաժշտուհի
Մարգարիտ Բաբայեանին:

«1906ին¹, Պարիս Նոյեմբեր ամսին
էր, Կոմիտաս վարդապետի հետ տենդավառ
պատրաստութեամբ էինք հայկական մեծ նուա-
գահանդէսին: Կոմիտաս վարդապետը մէկ
ինձ էր սովորեցնում նոր եղանակներ, մէկ
հանգուցեալ աշակերտիս Մուղունեանին էր
խրատում, յետոյ սովորեցնում Շահմու-
րատեանին, մէկ խմբի եղանակներն էր գրում
եւ Lamoureuxի շատ անուանի խումբը փոր-
ձում եւ հետները չարչարում հայերէն
արտասանելու եւ զգացնելու համար, մէկ էլ
քրոջս դաշնամուրին համար Մշոյ պարերն
էր յարմարեցնում»:

«Վերջապէս հասաւ Դեկտ. 1ի իրի-
կունը, Salle des agriculteursի մեծ սրահը
ծայրից ծայր լիքն էր. վարդապետը միայն
ջղերի ոյժով ոտքի վրայ էր՝ այնքան յոգնած
էր նախընթաց աշխատութիւններից եւ փոր-
ձերից: Նրա ձայնը այնպէս կտրուած էր, որ
մօտիկ բարեկամներս եւ ես զողում էինք,
թէ ինչպէս պիտի յաղթէ այդ սոսկալի Ֆի-
զիքական յոգնութեանը»:

«Ահա հասնում է այդ րոպէն. վար-
դապետը խիստ եւ վսեմ հագուստով, ինչ-
պէս մի զարմանալի տեսիլ հին քրիստոնէա-
կան դարերի՝ որ արդէն զգայուն Փրանսիացիի
հոգին խռովել էր, մօտենում է փոքրիկ եր-
գեհոնին եւ ինքը իրեն դաշնակցելով սկսում
մեղմամեղմ (pianissimo) «Տիրամայր» խա-
չի երգը: Ամբողջ հասարակութիւնը կար-
ծես պապանձուել էր, մարդիկ կարծես ի-
րանց շունչը պահել էին, որ աւելի եւս կա-
րողանան ըմբռնել այդ անասելի ցաւին հետ

¹ Տ. Զաւէն՝ «Կոմիտաս վարդապետի արուես-
տը», «Մուրճ», 1905 թ. Թիֆլիս:

¹ Մ. Բաբայեան, «Տպաւորութիւններ Կոմիտաս
վարդապետի անձին եւ գործին շուրջ»՝ «Նաւասարդ»
1914 Պոլիս:

մեր ազգին դարաւոր աղերսանքին վսեմ եղանակը: Ու տպաւորութիւնը անպատմելի էր»:

«Շատ անուանի Պարիսի երաժիշտներ եւ երգիչներ պատմում էին ինձ աւելի ուշ իրենց տպաւորութիւնը, թէ երբեք իրենց կեանքում այդպիսի խոր երաժշտական յուզմունք չէին ստացել»:

Այս համերգին իրենց աջակցութիւնը բերել են Մարգարիտ եւ Շուշիկ Բաբայեանները, ծանօթ երգիչ (tenor) Ա. Շահմուրատեան եւ գրագէտ-քննադատ Արշակ Զօպանեանը դասախօսել է Հայոց բանահիւսութեանը վրայ: Անհրաժեշտ է շեշտել այստեղ, ինչպէս Բաբայեան քոյրերը, այնպէս էլ Արշակ Զօպանեանը շատ է օժանդակել Կոմիտաս վարդապետի աշխատանքներին:

«Le monde musical». — «Հայկական երաժշտութիւն — ահա մի նորութիւն, մի յայտնութիւն, որ մեզ տանում է հեռու եւ ապրել է տալիս մի մոռացուած ժողովրդի կեանքով: Հարկաւոր կը լինէր Բուլգոլտ Դիւզուդէի լեզուն, որ հնարաւոր լինէր տալ մի գաղափար ժողովրդական եւ եկեղեցու երգերի մասին, որ Հայր Կոմիտաս բերել է մեզ Հայաստանից: Եւ միթէ դեռ չե՞սք տեսնում մարդ այն երկար սեւ ուրուականի կիսադէմքը, որի բարձր վեղարը աւելի երկարացնում է նրա ստուերը, դեռ չե՞նք զգում այն երգերի խորհրդաւորութիւնը, այն քաղցր մեղամաղձութիւնը, այն հնչուն ճոխութիւնը, որ մաղթում են ամենակարողին կամ գովում բնութեան գեղեցկութիւնը, սիրելի «Հովը», «Դրան խնկի ծառը», «Բարերար անձրեւը», «Սիրելի եղբ» կամ այն պարերի անդիմադրելի յոժը...»¹

«Le courrier musical». — «Հայկական համերգի քաղցրութիւնը որքան ուժգին էր, նոյնչափ էլ առանձնայատուկ այն ժողովրդական երաժշտութեան, որ մեր ա-

ռաջ բաց արաւ «Salle des agriculteurs», բազմութիւ եւ ընտիր հատուածներով: Այս համերգը տեղի ունեցաւ Հայր Կոմիտասի շնորհիւ եւ աշխատութեամբ, կիրթ երաժշտագէտ եւ եռանդուն քարոզիչ իր ազգի բնական արուեստի: Լսեցինք սիրոյ, աշխատանքի, պանդխտութեան եւ կրօնական երգեր խմբով կամ միաձայն, անչափ գրաւիչ, որոնցից մեծ մասը կրկնուեցան... Հայր Կոմիտասը, երաժշտական երեկոյթի հոգին, աննման էր պատարագի արարողութեան երգերում»¹:

«Le Mercure musical». — «Այս² համերգը մի յայտնութիւն, մի սքանչանք էր: Ես կարծում եմ մեղանից ոչ ոք չի կասկածում այն արուեստի գեղեցկութեան վրայ, որ իսկապէս ոչ Եւրոպական է եւ ոչ էլ արեւելեան, բայց եզակի բնաւորութիւն ունի իւր շնորհալի քաղցրութեամբ, թափանցող եւ յուզիչ ազնիւ քնքշութեամբ»:

«Այս մեղեդիները քնքշել են եւ ջնջելով եւ ընտիր, ճկուն եւ կենդանի ու թմով՝ մի երաժշտութիւն է, որ բոլորում է ամբողջովին սրտից եւ հոսում ինչպէս մի թարմ ջուր, վճիռ եւ լուսաւոր: Այս երգերը արեւգակ ունին. ոչ կիզել արեւը Արարիայի կամ Պարսկաստանի անապատների, այլ ոսկեղօծ պարզութեամբ ամբողջովին երկնային, որի ջերմութիւնը մի գգուանք է ձիւնապատ լեռանց դադաթների, սաղարթագեղ անտառների եւ խոխողացող վտակաց փայլով: Թերեւս սխալ չլինէր ոմանց կարծել, թէ երկրաւոր դրախտը Հայաստանում, Արարատ լեռան ստորոտին էր, որովհետեւ այն աշխարհը, որի պատմութիւնը այնքան չարաբաստիկ եղաւ, իրօք ընտրեալ երկիր է, ուր արդաւանդ ու բարեբեր բնութիւնը բաշխում է մարդուն ամէն տեսակ բարիք»²:

«Մի տեւական հովերգութիւն անդորր

¹ Տես նոյն ամսագրի Փետրուարի թիւը 1907 Էջմիածին:

² Տես նոյն ամսագրի Փետրուարի թիւը 1907 Էջմիածին:

¹ Ս. Զարութիւնեան՝ «Հայկական համերգ Պարիսում», «Արարատ», 1907 Էջմիածին:

ու քաղցր, ժպտուն, այդ պիտի լինէր եւ այդ եղաւ իսկապէս Հայաստանի հովիտների կեանքը, չնայած այն բոլոր չարեաց, որ ակօսեցին այդ աշխարհը: Այսօր մեզ հաղորդուեցան սիրոյ երգերի մէջ չքնաղ շարքով, վառ, անոյշաբոյր ծաղիկներ: Այս սիրոյ երգերն են մեղամաղձիկ եւ խանդակաթ ինչպէս եւ ամբողջ աշխարհում, բայց մի առանձին նուրբ երանգով, քնքոյշ յոյգերով:»

«Աշխատանքի երգերը երկարագոյն մի աղաղակ են, հարուստ գերգեղանքով, որ արձագանգ է տալիս մի լեռնից միւսը եւ ի դուրս շարժում «Աղբէր ջան եղին», երկրագործ հայի մտերիմ խորհրդակցին:»

«Դարձեալ ողբը, որով գեղում, թափում է ազատօրէն անտիրութեան եւ պանդխտի ամբողջ թախիծը. բայց խառը չէ ոչ գանգատ եւ ոչ ըմբոստութիւն:»

«Պաշտամունքի (պատարագի) երգերը նոյնպէս բոլորովին ազգային ժողովրդական, չունին ամենեւին այն երկչոտ յարգանքը, որ կասեցնում են նոյնիսկ յուսոյ եւ վստահութեան ժամերին: Սրանք հոգու գեղմունքներ են, որ բաց են անում ամբողջովին իր ներքինը եւ իր կեանքը բոլորանուէր: Մարդը գում է ջերմ խորհրդաւոր հաւատի թըրթուրով, որ առանց ջանքի՝ հիացմանց կատարներն է հասնում:»

«Վերջապէս պարերի եղանակը չունին մերոնց արտորանքը, ոչ էլ մեր չափի կոշտութիւնը, երբեմն վեհ եւ կրօնական, երբեմն մեղմ, ինչպէս սիրոյ երգ, երբեմն թեթեւ եւ անմեղ ուրախութեամբ, բայց խորապէս հմայիչ.... գեղեցիկ մարմինների ճշմարիտ երաժշտութիւն, ներդաշնակ եւ ազատ:»

Քննադատը խօսքը մասնաւորացնելով Կոմիտաս վարդապետի մասին շարունակում է:

«Հայր Կոմիտաս, որ չէր վախեցել դաւ եւ ղեկավարել խումբը եւ երգել պաշտա-

մունքի մեղեդիներ, մեր «Stabat Mater»-ի համապատասխան կտորի մէջ հասաւ մի այնպիսի յուզմունքի ուժգնութեան, որ համարեա արտասուեցինք, եւ Հայր Կոմիտասը արժանացաւ ուղացիայի:»

«Ոչինչ աւելի ազդու չէ, քան իր մեծ սեւ վեղարով քաղցրութեամբ եւ արժանաւորութեամբ խոնարհուիլը եւ կրկին երգեհոնի առաջ նստիլը եւ վերջին տողը վերսկսիլը, որը երգեց համարեա անձայն, ուր լսուում էր մեծ վշտի գաղտնիքը, մի երկարատարած արգահատանքի շեշտով, ամփոփուած վեհութեամբ, որ Աստուածայիններկայութիւն է ազդում հոգուն:»

«Հայր Կոմիտասը, որին պատկանում է այս եղանակների հաւաքելու եւ առաջին անգամ նրանց գեղեցկութիւնը ճանաչելու պատիւը, մի հանձարեղ, շնորհալի երաժշտագէտ է. որովհետեւ այդ երգերից շատերը յարմարեցրել է երգեհոնի կամ խմբերգի, ուր ցոյց է տալիս շատ ճիշտ եւ նուրբ ըմբռնում:» պահելով ազգային առանձնայատկութիւնը եւ երանքը:»

Սորբոնի (համալսարանի) երաժշտութեան նշանաւոր պրոֆէսոր Լուի Լալուա, խօսելով Հայոց պարերի մասին ի միջի այլոց հետեւեալն է ասում.

«Հայոց պարերը այնքան բնական, այնքան ճկուն, այնքան կենդանի, ընդունակ արտայայտելու մարմնի շարժումներով ու ներդաշնակ ձեւերով հոգու համապատասխան շարժումներն ու ելեւէջները, զարմանալի մի արուեստ, որ անտեղեակ է այն պայմաններին, որով ապրում է կամ աւելի ճիշտ մեռնում է եւրոպական նուագի երաժշտութիւնը: Հայ եղանակը անձառելի քնքշութիւն ունի: Աւելի պարզ եւ աւելի նուրբ բան չկայ, քան այս անոյշ եւ ճկուն երգերը, որոնց եղանակը եւ չափը ունին գերազանց ազատ շնորհալիութիւն:»¹

¹ Գ. Վ. Յովսէփեան, «Կոմիտաս վարդապետի երաժշտական ճանապարհորդութիւն Եւրոպայում», «Արարատ», 1907, Էջմիածին Հովտեմբեր թիւ:

«Տաղաչափու թիւնը ճկուն, ճոխ, բնական ներդաշնակութեան կենդանի պատկերներ, եղանակներ, որոնք աչքի առաջ պատկերացնում են արձանագործութեան ձեւերն ու շնորհալի կեցուածքը: Ես չգիտեմ ինչ կը լինէին այս պարերի քնքշութիւնը արեւմտեան կոշտ մատների տակ: Շուշիկ Բաբայեան նուագեց ոչ միայն իբրեւ ճշմարիտ արուեստագէտ անհասանելի կատարելութեամբ, այլ յուզիչ քաղցրութեամբ եւ նուրբ զգացումով, որի գաղտնիքը մեզ համար համարեա կորած է»:

«Այս եղանակները դաշնակել է հազուադէպ ճարտարութեամբ եւ ընտիր ճաշակով Հայր Կոմիտաս վարդապետ, նոյնպէս նա է գրի առել եւ դաշնակի վերածել Հայոց պարերը»:

Պարիսում մեծ աղմուկ հանելուց յետոյ, Կոմիտաս վարդապետը մի քանի դասախօսութիւններ է կարդացել Հայ երաժշտութեան մասին նաեւ Զուիցերիայի կարեւոր կենդրոններում՝ Յիւրիխ, Լոզան, Բերն եւ Ժընեւ դասախօսութեան ներկայ են եղել բազմաթիւ պրոֆէսորներ: Ինչպէս միշտ, այս անգամն էլ դասախօսութեան միացած է եղել երգ եւ նուագ:

Զուիցերիայի գեղարուեստական թերթերը մեծ հիացմունքով են արտայայտուել Հայոց եղանակների եւ մեծ արուեստագէտի մասին:

Հայր Կոմիտասը Հայ երգը հասցնում է նաեւ մինչեւ Նեղոսի ափերը, մինչեւ հեքեթային Նգիպտոս: Հայ գաղութը մնում է զարմացած՝ լսելով Հայ երգը, որը հոսում է զուլալ եւ վճիտ: Տիգրան Կամսարական մի գեղեցիկ յօդուած է նուիրում Կոմիտաս վարդապետին, ուր յօդուածագիրը չի կարող իր ամբողջ զգացմունքը արտայայտել:

«Մենք կը կարծէինք թէ, վարդապետը որ կուգայ Էջմիածնէն, մեռն կը բերէ իր հետ միայն, բայց դուք վարդապետ, դուք Արարատը փոխադրեցիք Նգիպ-

տոս. իրան է Հայր Սուրբ, լեռները կը քայլեն»¹:

Կոմիտաս վարդապետը անցնում է նաեւ երազային իտալիա, ուր տալիս է դասախօսութիւններ եւ երգում Հայ երգ:

Վենետիկի Միլիթարեանների միաբաններից Հայր Կ. Տէր-Սահակեանը մեծ զովասանքով է խօսում տարաբախտ արուեստագէտի մասին:

«Եւ ահա Կոմիտաս վարդապետ յետ յստակ բանախօսութեամբ Հայ երաժշտութեան տեսակները որոշելու եւ անոնց բաղդատական վերլուծումն ընելու, իտալական երկնագմբէթին մէջ կամարաձեւ կը ձգէ իր երգը, հզօր՝ ինչպէս ժողովրդեան մը ձայնը ու թրթռուն՝ զայն արտադրող սրտերուն նման»:

«Արտեւանունք կը ցածնան աչքերով վրայ. կը կուրանան անոնք յուզման պահուն, մերձաւոր առարկաներու, հեռացած, կորսուած են այլ եւս լճակը, Վենետիկը, Ալպեանց սպիտակ կատարները... ահա կը թաւալի մեր մօտէն Նփրատը, Երասխը, ահաւասիկ Հայ գիւղերն ու կալերը, դուրսի կղերն ու հօտաղները, ահա ձիւնապատ գագաթները նուիրական Հայ լեռներուն»:

«Ահ, որքան զով է այստեղ, այս բարձրութեան եւ այս ձիւներուն մէջ, Ալպեազի վրան՝ իր կողերէն կախուած գիւղերը, իր կանաչ արօտները, իր անբաւ ծաղիկները՝ ամէնն ալ թաղուած են սպիտակութեան մէջ»²:

Եւրոպայում իր անուան հռչակ տալուց յետոյ, տաղանդաւոր արուեստագէտը հաստատուում է գեղանկար Վոսփորի ափերի վրայ: Կարճ ժամանակամիջոցում կարողանում է կազմակերպել 300 երգիչ-երգչուհիների մի խումբ, որը Պոլսում 1911

¹ Տ. Կամսարական «Գոհարներ Հայ գրականութեան» Ամբիկա 1917:

² Կ. Ս. Սահակեան. «Հայկական երաժշտ. ի վենետիկ» «Բաղմավէպ», 1907 Յուլիս-Օգոստոս:

Թուից սկսեալ տալիս է մի շարք համերգներ՝ բոլորն էլ իրարից դերազանց յաջողութեամբ։ Պոլսահայը եւ Պոլսում ապրող հայերը երբեք չեն կարող մոռանալ այն հարուստ, կախարդական եւ գեղարուեստական կատարելութեան հասնող համերգները, որ շնորհալի երաժշտագէտը ի գլուխ բերաւ։ Մենք յիշում ենք շատ լաւ, թէ ինչպէս հասարակութիւնը խուռներամ վազում էր Կոմիտասեան համերգներին՝ ըմբոշխնելու հայ երգը։ Պոլսահայը որ ինքնաբերաբար թատրոն եւ համերգ չէր դնում, երբ Կոմիտասն էր խումբը կառավարում եւ երգում, նա աճապարում էր մի օր առաջ տոմսակ դնել։ Եւ ինչպէս չգնալ, երբ խումբը երգում է հանդիսաւոր լրջութեամբ, երբ նա արտայայտում է երգի միջոցով հայ ցեղեամբողջ կեանքը, երբ կախարդական վարդապետը իր քաղցր ձայնով մեզ երգում է «Մոկաց Միրզա», «Արօր ու տատրակ», «Գուլթաներգ», «Ժիրանի ծառ», եւ վերջապէս իր գլուխ գործոցը «Անտունի»։ Շատ անգամներ նա երեւաց նաեւ տաճարներում եւ մեղմամեղմ՝ երգեց շարականներ։ Նրա երգած ժամանակ, մենք տեսել ենք շատերին, եկեղեցու կամարների տակ, դառնագին արտասուելիս։

Կոմիտաս վարդապետը Պոլսում մասնաւորապէս, որպէս երգիչ եւ կապելմայստեր մեծ եղաւ։

Պոլսումն էլ նա կրկնեց իր դասախօսութիւնները՝ յառաջ բերելով նոր եւ մեծ շարժում։

Պոլսից յետոյ իր վերջին դասախօսութիւնը կարգում է Պարիսի երաժշտական համաշխարհային համագումարին եւ վերահասնում է Պոլիս։ Պատերազմի ժամանակ պատրուում է եւ ապա խելագարուում։

Այս գլուխը վերջացնելու համար անհրաժեշտ ենք համարում, աւստրիացի նշանաւոր մի պրոֆէսորի կարծիքը եւս ասել մեր երաժշտագէտի մասին։

Մենք առիթ ունեցանք տեսնուելու

Վիեննայի համալսարանի երաժշտութեան պրոֆէսոր Լախի հետ, որը Աւստրիայում համարուում է ականաւոր երաժշտագէտ-քննադատ։

Մեծ զարմանք պատճառեց մեզ, երբ յայտնեց թէ Կոմիտասեան աշխատանքների հետ ծանօթ է։ Քաջալերուած այս յայտարարութիւնից՝ հարցրինք իրեն։

— Ի՞նչ է ձեր կարծիքը հայր Կոմիտասի արուեստի մասին։

— Ես երաժշտական օրէնքների եւ կանոնների եմ վերլուծել նրա գործերը եւ այժմ այն խորը կարծիքին եմ որ հայր Կոմիտասը տաղանդաւոր ներդաշնակող է։ Նա գիտնական եւ ինքնուրոյն երաժշտագէտ է, եւ դուք իրաւունք ունիք պարծենալու նրանով։

Ծանօթ հայրենագէտ Փրետերիք Մակլէրն էլ հիացողներից մէկն է Կոմիտասի արուեստով։

«1914 թուին, Պարիսի երաժշտական-գրական մեծ համագումարում, ուր հաւաքուել էին տիեզերքի գլխաւոր երաժշտագէտներ, Կոմիտաս վարդապետը հայ կրօնական մի համերգ տուաւ, հիացնելով ներկայ եղող երաժիշտները»։

«Ժողովրդական երաժշտութեան, ինչպէս նաեւ արօրի, խոփի, գութանի երգերի վրայ տուած դասախօսութիւնները, պիտի ասել համագումարի նիստերի ամէնից թանկագինները եղան»¹։

Մարգարիտ Բաբայեանը իր յօդուածում գրում է մի շատ հետաքրքիր դէպքի մասին։

«Երբեք չպիտի մոռանամ անգլիական «Սպիտակ» կղզում պատահած մի սրտաշարժ դէպք։ Անգլիական կոկիկ հիւրասէր փոքրիկ պանդոկում ուր ապրում էինք նրա հետ, ի միջի այլոց մի համակրելի անգլիական զոյգ էր բնակում՝ երկու սիրունիկ խարտեաշ որդիներով։ Հայրը մի պաղարիւն կա-

¹ Fr. Macler «La musique en Arménie», Paris 1917.

տարեալ Բրիտանացի էր, իսկ մայրը սեւաչեայ, ծիծաղկոտ իրլանտուհի,:

“Յայտնի է Անգլիացիների յարգանքը դէպի հոգեւոր անձինք. նոքա բոլորը՝ թէեւ չափազանց հետաքրքրուած՝ երբեք չէին համարձակուում մինչեւ իսկ ընդհանուր դահլիճը մտնել, երբ վարդապետը այնտեղ պարապում էր,:

“Հասնում է ընտանիքին արձակուրդին վերջին օրը եւ բոլորս պսպղուն թէյի սեղանին շուրջ նստած՝ մի ժամից պիտի բաժնուինք,:

“Տիկինը սիրտ առնելով շտապում է ինձ հարցնել, թէ արդեօք շատ անհամեստութիւն պիտի համարենք, եթէ իր փափաքը յայտնէ լսելու վարդապետին նրա ազգային երգերը ասելիս,:

“Վարդապետը յօժարութեամբ վեր է կենում, մօտենում դաշնամուրին եւ սկսում “Կռունկը,։ Հազիւ աւարտած նայում եմ տիկնոջը. — Ի՛նչ տեսնեմ, այդ զուարթ դէմքը ամբողջապէս դողում է, այլ եւս յուզմունքը չի կարող պահել եւ աղի արտասուներով լալիս է...:

“Ամուսինը մօտենում է ինձ. “Այս ի՛նչ արիք կնոջս: Տասը տարի ամուսնացած, կնոջս այս վիճակին մէջ չեմ տեսել,:

“Բայց հրաժեշտի ժամը վրայ է հասնում եւ տիկինը աչքերը սրբելով հրաժեշտ է առնում մեզանից եւ նորից հեկեկալով ասում. “Այս ի՛նչ երաժշտութիւն էր, որ ամբողջ էութիւնս տակն ու վրայ արաւ. երբեք չպիտի մոռնամ նրան,:

Բ. Գրոռթիւններ:

Բացի դասախօսութիւններից եւ համերգներից, Կոմիտաս վարդապետը նաեւ մեծ զարկ է տուել Հայոց երաժշտական գրականութեանը: Մրա կատարած զերրայս ասպարէզի մէջ անուրանալի է:

¹ Մ. Բաբայեան. “Տպաւորութիւններ Կոմիտաս վարդապետի անձին ու գործին շուրջ” “Նաւասարդ,” 1914, Պոլիս:

Նա երաժշտական գրականութեամբ զբաղուել է դեռ ճեմարանի ուսանող եղած ժամանակ, իր առաջին ուսումնասիրութիւնները լոյս են տեսել Էջմիածնի “Արարատ,” կրօնական ամսագրում: Հետաքրքրական եւ բարեխիղճ աշխատանքներ են, որոնցից մասնագէտ երաժիշտը, նա մանաւանդ Հայոց երաժշտութեամբ զբաղուող մէկը կարող է շատ օգտուել: Այդ եւ ուսանող եղած շրջանում նրա գրած ամենարժեքաւոր գրութիւններն են “Հայոց եկեղեցական եղանակները,” (Արարատ 1893) եւ “Հայոց եկեղեցական երաժշտութիւնը ԺԹ. դարում,” (Արարատ 1897 Մայիս):

Բերլինում ուսանող եղած ժամանակ եւ ապա այն շրջանում, երբ Եւրոպայում հայկական համերգներ էր տալիս, աշխատակցել է գերմանական եւ ֆրանսիական հանդէսների՝ զրելով Հայոց եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան մասին գիտական յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ¹: Տարաբախտաբար հնարաւորութիւն չունեցանք ձեռք բերելու այս ամսագրերը:

Հայ ժողովրդական երաժշտութեան մասին գրած իր գեղեցիկ ուսումնասիրութիւնները, կարելի է ասել, ընդհանրացումն են իր դասախօսութիւնների:

Համառօտ ակնարկ է ձգում Հայ դուսանների վրայ եւ գտնում որ նրանք ունին ինքնուրոյն դպրոց: Գուսանական դպրոցները երկու տեսակ են. կրթութեամբի եւ անուսումների դպրոցներ: Վերջինները մի կամուրջ են բուն ժողովրդականի եւ կրթութեամբ գուսանական դպրոցի միջեւ:

Նա շատ հետաքրքիր գրում է թէ ինչպէս ժողովուրդը խաղ է կապում, թէ որքան ժողովրդական եղանակը կեանք ունի՝

¹ “Die Interpunction der Armenier,” (Sammelbände der internationalen Musik-Gesellschaft 1899).
 “Armeniens volkstümliche Regentänze,” (Zeitschrift für armenische Philologie)
 “La musique rustique arménienne,” (Mercure musical et bulletin français 1907).

թէ ուր է գիւղացին երգում եւ ինչ ժամանակ եւ քանի տեսակ է գիւղական երգեցողութիւնը: Այս բոլորի մասին մենք կ'անդրադառնանք յետոյ:

Կոմիտաս վարդապետը, ծանօթ գրագէտ-քննադատ Մանուկ Աբեղեանի աջակցութեամբ հաւաքում է եւ հրատարակում «Հազար ու մի խաղ»,¹ ժողովրդական երգարանը, «որոնք բոլորն ունին իրենց յատուկ եղանակները եւ որոշուած են երգելու եւ ոչ թէ կարգաւ համար,, ինչպէս կազմողներն են գրում ծանօթութեան մէջ: Այս երգարանը շատ գեղեցիկ գործ է. խօսքերի եւ բառերի ընտրութիւնը կատարուել է ճշակաւոր: Եւ դրա համար «Հազար ու մի խաղ»-ի երկու յիսնեակներն էլ քննում են մեր գրականութեան գոհարներէ:

Երբ Մակար Եկմալեանի պատարագը լոյս է տեսնում, Կոմիտաս վարդապետը Բերլինից մի խիստ քննադատական է ուղարկում: Այդ քննադատութիւնը տպուած է «Արարատ», ամսագրի մէջ (1898 թ. երես 111—117):

Եկմալեանը առանց լուրջ տուեալների, նոյն ամսագրում, մի բաց նամակ է ուղղում Կոմիտաս վարդապետին, ուր նկատում է միայն կիրք:

Չնայած որ այդ ժամանակ դեռ եւս Հայր Կոմիտասը երաժշտութեան ուսանող էր Բերլինում, սակայն պիտի խոստովանել որ այդ քննադատութեան մէջ արդէն նա երեւան է գալիս որպէս գիտական երաժիշտ: Այդ յօդուածում նա ցոյց է տալիս ոչ թէ միայն սխալները, այլ եւ մեզ ծանօթացնում է երաժշտական ճշմարտութիւնների հետ: Այս է պատարագի քննադատութեան բովանդակութիւնը:

Ներածութիւն. — Զատեակները դրուածքին. — Փոխադրութիւն եւ փոփոխութիւն. — Տաղաչափութիւն եւ շեշտա-

դրութիւն. — Չայնաոութիւն եւ ներդաշնակութիւն. — Դասաւորութիւն եւ կապակցութիւն. — Պակասորդ եւ տալագրութիւն. — Եզրակացութիւն:

Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Կոմիտաս վարդապետը միակ երաժիշտն է մեր մէջ, որ այնքան խոր եւ բազմակողմանի պատրաստութիւն ունի մեր եւ օտար երաժշտական գրականութեանը մասին. որպէս այգալիսին, Կոմիտաս վարդապետի գործը խոշոր է եւ անմրցելի:

(Ըր-ն-ի-ն-ի)

ՌՈՒՐԵՆ ԹԵՂԷՄԷՋԵԱՆ



Հ Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՄԵՍՐՈՐԵԱՆ ԳՐԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Ե. դարէն մինչեւ այսօր՝ 1500 տարուան ընթացքին մէջ՝ հայերէն գրերը չէին կրնար մնալ միեւնոյն վիճակին մէջ, անոնք անցան զանազան ձեւափոխութիւնների: Այս ձեւափոխութեանց ուսումնասիրութեան աղբիւրներն են մեր հին ձեւագիրներն ու արձանագրութիւնները:

Աշխարհիս վրայ սփռուած բովանդակ հայ ձեւագիրներու ընդհանուր թիւն է մօտ 13.000, որոնցմէ ամենահինն է Մոսկուայի Լազարեան ճեմարանին մէջ պահուած Աւետարանը՝ ՅԼԶ = 887 թուականէն, որ եւ լուսատիպ հրատարակուած է: Չենք յիշեր Երուսաղէմի հնագոյն Աւետարանը, Անտոնեան հարց թարգմանչագիր Աւետարանը եւ կրկնագրի զանազան մնացորդներ, որոնք սոյն թուականէն շատ հին կը համարուին, բայց ըստ որում հաստատուն թուական չունին, այնչափ վստահելի չեն, մանաւանդ ծանրակշիռ եզրակացութեանց համար:

Չեւագիրներուն ամենախոշոր մասը դեռ ցուցակագրուած չէ, այսպէս են Էջմիածնի 5000,

¹ «Հազար ու մի խաղ» առաջին յիսնեակ 1903 թ. Էջմիածին. «Հազար ու մի խաղ» երկրորդ յիսնեակ 1905 թ. Էջմիածին: